Community-led Urban Strategies in Historic Towns (COMUS)

Funded by the European Union and the Council of Europe

EUROPEAN UNION

COUNCIL OF EUROPE

CONSEIL DE L'EUROPE

Implemented by the Council of Europe

«Համայնքի կողմից իրականացվող քաղաքաշինական ռազմավարություններ պատմական քաղաքներում» (COMUS) ծրագիր

Շիրազի (Գորկու) 17 հասցեում պատմաճարտարապետական հուշարձանի նորոգում և հարմարեցում՝ որպես արվեստագետների կացարան

Նախնական տեխնիկական գնահատում

Բովանդակություն

1. Ներածական 3
2. Ամփոփագիր՝ վայրը և դրա կառավարումը..... 4
3. Վարչական տեղեկություններ 5
4. Վիճակի եզրակացություն..... 6
5. Առկա տեղեկություններ..... 7
6. ՆՏԳ-ի շրջանակը..... 8
7. ՆՏԳ..... 9
8. Փաստաթղթավորում..... 14
9. Նպատակահարմարության վերաբերյալ ուսումնասիրություններ 16

1. Ներածական



Նկ.1. Տեղադիրքը (սև եզրագիծ)

Նկ.2. Շիրազի 17 տունը

1.1 Երկիրը կամ տարածքը՝ ՀՀ, Շիրակի մարզ, ք. Գյումրի
1.2 Տեղեկությունները համադրող կազմակերպության անունը՝ Կումայրի պատմաճարտարապետական արգելոց
1.3 Կոնտակտային անուն՝ Ստեփան Տեր-Մարգարյան
1.4 Էլ-հասցե՝ termargaryan52@mail.ru
1.5 Շենքի կամ վայրի անվանումը և հասցեն՝
Շիրազի 17 փ. բնակելի տուն
1.6 Գույքագրման համար(ներ)ը՝
7.1.4.81
1.7 Կառույցի/հուշարձանի/վայրի տեսակը՝
տեղական նշանակության
1.8 Կարևոր ամսաթվեր՝ հուշարձանը կառուցվել է XIX դ.
1.9 Ընթացիկ կիրառում(ներ)ը՝ լքված կառույց

2. Ամփոփագիր՝ վայրը և դրա կառավարումը

Շիրազի 17 հասցեում տեղադրված՝ տեղական նշանակության հուշարձան-շենքն իր ճարտարապետական առանձնահատկություններով հանդիսանում է Գյումրի քաղաքի ժողովրդական տների լավագույն օրինակներից մեկը: Հուշարձանը կառուցվել է XIX դ. վերջին ալեքսանդրապոլյան շինարարական արվեստի ոճով: Այն եղել է դերձակ Ալյոշայի տունը: Տեղադրված է թեք ռելիեֆի վրա և մեկ ու կես հարկանի է (նկուղային հարկի մի հատվածում տեղակայված է եղել ձիերի համար ախոռ և տան տերը հավանաբար ունեցել է սեփական ֆայտոն):

1988 թ. Սպիտակի ավերիչ երկրաշարժը հսկայական վնաս հասցրեց կառույցին և բնակիչներին ստիպեց այն լքել: Բարեբախտաբար հուշարձան-շենքն իր վրա չի կրել վերակառուցման բացասական ազդեցություններ և պահպանվել է իր հին տեսքով: Գյումրին՝ ունենալով հարուստ մշակութային ժառանգություն, ունի նաև արվեստների վերակենդանացման կարիք, որոնցից են գեղանկարչությունը, որմնանկարչությունը, երաժշտությունն ու գրականությունը: Այստեղ իրենց հանգրվանը կգտնեն արվեստի ներկայացուցիչները, որոնց համար կստեղծվեն կացության և ստեղծագործելու համար անհրաժեշտ պայմաններ՝ կկազմակերպվեն գեղանկարչության մշտական և շարժական ցուցադրություններ, արվեստների շուրջ բանավեճերի, երաժշտության և ասմունքի երեկոներ, որոնցում ակտիվ մասնակցություն կունենա գյումրվա՝ դեպի արվեստներ ձգտող երիտասարդությունը: Այստեղ կտեղափոխվեն և իրենց մշտական խնամքը կունենան հայ մեծ նկարիչ Մ. Ավետիսյանի որմնանկարներից մի քանիսը:

Հետագա փլուզման վտանգի տակ գտնվող հուշարձանի վիճակի կայունացման, տարածքի և հուշարձանի համալիր հետազոտության, վերականգնման և արվեստագետների ապրելու և ստեղծագործելու համար հարմարեցնելու նպատակով՝ նախնական գնահատմամբ անհրաժեշտ կլինի մոտ **1 224 000 000 դրամ** (մոտ 2 310 000 եվրո): Հուշարձանի և նրա պատմական միջավայրի բարեկարգման ու զարգացման ծրագիրը կարճաժամկետ է: Գործընթացին մասնակցություն կունենան Գյումրու համայնքապետարանը, ՀՀ մշակույթի նախարարությունը, ակտիվ խմբերը:

3. Վարչական տեղեկություններ

3.1 Պատասխանատու մարմիններ

Սեփականատեր, ՀՀ մշակույթի նախարարություն, Գյումրու համայնքապետարան, «Կումայրի» պատմաճարտարապետական արգելոց

3.2 Շենք/վայր, անվանում և հասցե

ՀՀ, Գյումրի քաղաք, «Կումայրի» պատմաճարտարապետական արգելոց, Շիրազի /Գորկի/ փողոց, տուն 17 (Ղորղանյան-Հակոբյան փողոցներով պարփակվող խաչմերուկների հատված)

3.3 Քարտեզին հղում

40.787660, 43.839512-40.787639, 43.839914

3.4 Հուշարձանի տեսակը

Շիրազի 17 հասցեում տեղակայված հուշարձանը ճարտարապետական կառույց է և հատկորոշում է բնակելի տուն: Ունի քաղաքային նշանակություն՝ արտահայտելով և բնորոշելով XIX դ. Գյումրի քաղաքի ավանդական ժողովրդական տները: Այստեղ առկա է միայն ճարտարապետական բաղադրիչ՝ առանց հնագիտական շերտի հետ համադրման:

3.5 Սեփականության իրավունք

Շիրազի 17 հասցեի բնակելի տունը մասնավոր սեփականություն է:Կառույցի կիսաքանդ ու խարխուլ վիճակի պատճառով այն լքված է և բնակեցված չէ: Ներկայումս ենթակա չէ օգտագործման:

3.6 Օրենքով սահմանված պաշտպանություն/ սահմանափակումներ

Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանները և դրանց պատմական միջավայրը պահպանվում և սահմանափակվում է «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման» ու «ՀՀ պետական սեփականություն համարվող և օտարման ոչ ենթակա պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով: Հուշարձանի փոփոխության դեպքում՝ հանրապետական նշանակության՝ ՀՀ կառավարության որոշմամբ, իսկ տեղական նշանակության՝ մարզային ինքնակառավարման մարմնի որոշմամբ:

4. Վիճակի եզրակացություն

Հուշարձանը փլուզման վտանգի տակ է գտնվում: Հուշարձանի պատերը և՛ ներսից և՛ դրսից խարխլված են և քայքայված, պատերի քարերը իրարից հեռվացել են և թափվում են, պատուհանները կոտրված են և անպիտան հետագա օգտագործման համար, հատակը ներսում բացակայում է, տանիքը վթարային վիճակում է, առաստաղը՝ նույնպես: Հուշարձանի տարածքում աճել է բուսականություն, որի արմատները ևս նպաստում են կառույցի շարունակական քայքայմանը: Կառույցի ծայրահեղ վթարային վիճակը թույլ չի տալիս կից կառույցների շահագործումը:

5. Առկա տեղեկություններ

5.1 Փաստագրական աղբյուրներ

Լուսանկարներ /ցամաքային/ – անձնական, լավ որակի
Լուսանկարներ /օդային/ – համացանց, միջին որակի

5.2 Օգտագործված գրականություն

Հիմնական աղբյուրներն են՝
Հրապարարակված աղբյուրներ չկան:
«Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման» ՀՀ օրենք
https://www.google.com/maps/@40.7877603,43.8397381,54m/data=!3m1!1e3

5.3 Արդեն կատարված դաշտային աշխատանքներ

Չկան

5.4 Ընթացիկ ծրագրեր

Չկան

5.5 Արդեն պլանավորված ծրագրեր

Չկան

5.6 Արդեն կատարված ֆինանսական հաշվարկներ

Չկան

6. ՆՏԳ-ի շրջանակը

6.1 Գնահատման չափը/բնույթը

Ներգրավված են երկու փորձագետներ՝

- Գայանե Նազլուխանյան՝ վերականգնող ճարտարապետ, 40 տարվա մասնագիտական փորձ, միջազգային փորձագետ
- Լուսինե Իգիթյան՝ պատմաբան, 16 տարվա մասնագիտական փորձ, փորձագետ:

Առաջադրանքի կատարման համար ծախսվել է երեք օր ուսումնասիրությունների համար և չորս օր գրասեղանի մոտ:

6.2 Ուսումնասիրության սահմանափակումները

Վավերագրական, արխիվային փաստաթղթերի, գծագրերի, հատակագծերի, հին լուսանկարների ձեռք բերում և ծանոթացում, մասնավոր սեփականության հանդիսացող հուշարձան մուտք գործելու դժվարամատչելիություն, ինչպես նաև վթարային վիճակում և չբնակեցված լինելու պատճառով ուսումնասիրություն ու հետազոտություն կատարելու վտանգ և անմատչելիություն:

7. ՆՏԳ

7.1 Նախապատմություն՝ ձևը, գործառույթը և զարգացումը

7.1.1 Շենքի/վայրի համառոտ նկարագիրը՝ դրա քաղաքային կամ գյուղական համատեքստի վերաբերյալ նշումներով, եթե կիրառելի է:

Շիրազի 17 հասցեում գտնվող բնակելի տուն-հուշարձանը գտնվում է քաղաքային վայրում՝ Ղորղանյան-Հակոբյան փողոցներով պարփակվող խաչմերուկների հատվածում, ուր կարելի է հասնել նաև քայլելով Հաղթանակ զբոսայգուց: Քանի որ այն եղել է վարպետ-դերձակի տուն, որը կառուցվել է XIX դ. վերջում և որտեղ նա բնակվել է, այն նաև իրենից ներկայացնում է Գյումրու արհեստավորների նիստ ու կացը բնութագրող քաղաքային նմուշ: Բնակելի տունը տեղադրված է թեք ռելիեֆի վրա, իրենից ներկայացնում է մեկ ու կես հարկանի բնակելի տուն /նկուղային հարկի մի հատվածում տեղակայված է եղել ձիերի համար ախոռ և հավանաբար ունեցել են սեփական ֆայտոն/: Այն ժողովրդական տիպի բնակելի տներից է: Կից տեղակայված են միահարկ բնակելի տներ: Այժմ գտնվում է խիստ վթարային վիճակում:

7.1.2 Շենքի կամ վայրի՝ վաղ ժամանակներից մինչև մեր օրերը պատմական զարգացման և էվոլյուցիայի համառոտ ակնարկ:

Հուշարձանը կառուցվել է XIX դ. վերջին ՝ որպես բնակելի տուն ալեքսանդրապոլյան շինարարական արվեստի ոճում: Այն եղել է դերձակ Ալյոշայի տունը, որից վերև կից մի քանի տներ ևս պատկանել են նրան: Տունը լավ վիճակում է եղել մինչև 1988 թ. Սպիտակի երկրաշարժը, սակայն դրանից հետո հասցված վնասների հետևանքով այժմ գտնվում է խիստ վթարային վիճակում: Հուշարձանը փլուզման վտանգի տակ է: Հարավային ճակատի շարվածքի քարերը տեղաշարժված են և թափվում են հարակից մայթի վրա: ***Այն հրատապ վերականգնման և վերանորոգման կարիք ունի:***

7.2 Նշանակություն

Խորհրդային տարիներին, ապա 1988 թ. ավերիչ երկրաշարժի հետևանքով հուշարձանը կորցրեց իր ճարտարապետական նշանակությունն ու տեսքը: Հետերկրաշարժյան տարիներին հուշարձան շենքի տեխնիկական վիճակը էլ ավելի վատթարացավ: Փրկելով պատմական հուշարձանը վերջնական փլուզումից՝ կկարգավորվի հետզարգացած պատմական արժեք ունեցող քաղաքային միջավայրի մի հատված, որը կնպաստի պատմական թաղամասում իրականացվող գործառույթների բազմազանությանը և քաղաքային միջավայրի հարստացմանը: Վերականգնելով և բարեկարգելով Շիրազի 17 հասցեում գտնվող բնակելի տունը՝ այն կհարմարեցվի Գյումրիում հյուրընկալվող արվեստագետների համար կացարան ստեղծելուն և նրանց ստեղծագործելու հնարավորության կընձեռվի: Այն մեծ նշանակություն կունենա օգտագործողների, իսկ համայնքի և քաղաքի հյուրերի համար այն կդառնա մշակութային սիրելի վայրերից մեկը:

7.2.1 Նշանակության/պատմական և ժառանգության կարևորության վերաբերյալ ամփոփ նկարագիր:

Հուշարձանը կառուցվել է որպես բնակելի տուն՝ XIX դարի վերջերին Գյումրիում ապրող վարպետ դերձակ Ալյոշայի համար և ունի պատմական ու մշակութային նշանակություն, քանի որ ներկայացնում է այդ ժամանակաշրջանի ժողովրդական տների ձևն ու տեսակը, վարպետ-արհեստավորների կենսակերպը: Այստեղ հատկանշական է նկուղային հարկում գտնվող ախոռը, որը հավանաբար մատնանշում է վարպետ-դերձակի կարողության մասին, քանի որ ձիեր և ֆայտոններ նշված ժամանակաշրջանում ունեին հարուստ մարդիկ: Շինության ճարտարապետական լուծումները բավականին նորարար են համարվում XIX դ. վերջին կառուցված ժողովրդական ավանդական տների համեմատ՝ առանց ճոխ զարդաքանդակների և գեղագիտական այլ արտահայտչամիջոցների: Կառույցի մասին պատմական տեղեկությունները սուղ են:

7.2.2 Գնահատման մեջ հաշվի առնվող հնարավոր կատեգորիաների ստուգացանկ:

Շիրազի 17 հասցեի բնակելի տունը պատմական առումով կարևոր է որպես XIX դ, վերջում ապրող գյումրեցի վարպետներ նիստն ու կացը արտահայտող վկայի՝ լինելով նաև Գյումրվա ավանդական ժողովրդական տան օրինակ: Բացի այդ այն ինքնատիպ է իր պահպանված ճարտարապետությամբ քաղաքային կոլորիտի ձևավորման գործընթացում: Այսպիսով տուն-հուշարձանն ունի տեղական նշանակություն: Այն առավել ուշագրավ կդառնա վերականգնումից և բարեկարգումից հետո՝ դառնալով Գյումրի այցելող արվեստագետների համար կացարան և ստեղծագործելու վայր:

7.3 Խոցելիության/ռիսկի գնահատում

1988 թ. Սպիտակի ավերիչ երկրաշարժը հսկայական վնաս հասցրեց Գյումրի քաղաքին և բնականաբար նաև հուշարձանին, որի հետևանքով վթարային դարձավ կառույցը: Ներկայումս շենքը ևս ենթարկվում է ռիսկայնության՝ շարունակելով փլուզվել, որը նաև սեփականատիրոջ անհետևողականության արդյունքն է: Գտնվելով սեյսմիկ ռիսկայնության գոտում՝ հուշարձանը ապագայում ևս վտանգված է, ուստի հետագա վերականգնողական աշխատանքներում անհրաժեշտ կլինի վերակագնումը համապատասխանեցնել սեյսմիկ անվտանգության չափորոշիչներին՝ առանց խաթարելու հուշարձանի պատմական տեսքը: Հուշարձանի ժառանգականության վերականգնման գործում անհրաժետ է ինտեգրել ինչպես համապատասխան պետական մարմիններին, այնպես էլ սեփականատիրոջը: Հուշարձանի պահպանման և վերականգնման համար խոչընդոտ են հանդիսանում վարչական թերությունները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների բացակայությունը, ինչպես նաև ազգաբնակչության գիտակցության բարձրացումը կառույցի պատշաճ շարունակականությունը երաշխավորելու համար:

7.4 Տեխնիկական վիճակ

Հուշարձանն իրենից ներկայացնում է ուղղանկյուն հատակագծով մեկհարկանի կիսանկուղով շինություն (Նկար 3,4): Այն կառուցված է տեղական սև գույնի տուֆից և ավանդական կրավազային կապակցող նյութով, շարվածքը՝ միդիս: Բնակելի հարկաբաժնի բացվածքները (Նկար 5) ուղղագիծ են և առնված են տրամատավոր պարակալով: Բնակելի տունն ունի երեք մուտք, որոնցից մեկը թաղակապ անցում է դեպի բակ (Նկար 6): Կառույցն ունի երկլանջ տանիք՝ օդափոխության պատուհաններով: Արտաքին ճակատն ավարտվում է բարդ տրամատավոր և մեծ ելուստ ունեցող քիվով , որը բեկվում է համապատասխան ռելյեֆի (Նկար 7): Միջհարկային ծածկերը լուծված են փայտե կլոր գերաններով (Նկար 8)՝ բացառությամբ կառույցի աջակողմյան հատվածի, որի նկուղում պահպանված են խաչվող թաղերով ծածկերը (Նկար 9,10): Ներկայումս կառույցը խիստ վթարային է. պատերի վրա նկատվում են նստվածքային ճաքեր, փայտե ծածկերը փտած և խարխլված են (Նկար 11), տանիքի ծպեղնածածկի և մետաղածածկի քայքայման հետևանքով անձրևաջրերն ազատ ներս են թափանցում ու քայքայում պատերի միջուկը: Քայքայված են շենքի ինժեներական ենթակառուցվածքները: Բակը վերացված է աղբանոցի (Նկար 12):

7.5 Անհրաժեշտ վերանորոգման համառոտ նկարագիր

Շիրազի 17 հասցեում տեղադրված շենքի վերանորոգման անհրաժեշտությունը պայմանավորված է նրա գեղագիտական, պատմամշակութային և ճարտարապետական մեծ արժեքով: Հուշարձանն ունի տանիքի, միջհարկային ծածկերի, կոնստրուկտիվ համակարգի և հատակագծային խաթարված նախնական լուծումների վերականգնման, վերանորոգման և վերահատակագծման, ներքին բակի բարեկարգման առաջնահերթ կարիք: Կառույցի կայունությունն ու անվտանգ շահագործումն ապահովելու նպատակով և առաջնորդվելով Ռիխտերի 12 բալանոց սանդղակի 9 բալ սեյսմավտան գոտում տեղադրված լինելու հանգամանքով, անհրաժեշտ է՝

- ամրացնել կառույցի հիմքերը, վերացնել պատերի նստվածքային երևույթները ցամաքուրդի միջոցով,
- կրակաթով ու բարձր ճնշման տակ ներարկել կրաշաղախի քայքայվածության հետևանքով միջուկում առաջացած դատարկությունները
- վերականգնել փայտե կոնստրուկցիաները և պատշգամբները
- հետագա օգտագործման նպատակով կատարել նորոգումներ կառույցի բորոլ հատվածներում
- բարեկարգել բակը
- մշակել կառույցի օգտագործման գործառնական նոր լուծումներ:

7.6 Կոնսերվացման/վերականգնման քաղաքականություն և առաջարկներ

Հուշարձանի նորոգումն ու ամրակայումը պետք է հենվի հուշարձանի մշակութային արժեքի լավագույնս անխաթար և ճշգրիտ վերստեղծման քաղաքականության հենքի վրա: Անհրաժեշտ է պահպանել կառույցների քարատեսակը, նյութագիտական լաբորատոր ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա՝ կապակցող շաղախի տեսակը, կառույցի ճարտարապետական ձևերի անխաթարությունը, կոնստրուկտիվ լուծումների տվյալ ժամանակաշրջանի տեխնոլոգիաները, վերականգնել սկզբնական գործառույթները, կամ դրանք վերափոխելու դեպքում՝ խստագույնս պահպանելով հատակագծային նախնական լուծումները:

7.6.1 Վայրի տեսլականի և դրա կայունության վերաբերյալ ամփոփումը նախնական փուլում:

«Կումայրի» արգելոցի տարածքում որակյալ քաղաքային միջավայրի ձևավորման և կանոնակարգման, ակտիվ և հավասարակշռված տրանսպորտային հաղորդակցության և առկա պատմական միջավայրի մատչելիության ապահովմանն ուղղված համապատասխան միջոցառումների իրականացման միջոցով:

7.6.2 Կոնսերվացման փիլիսոփայություն:

Շիրազի 17 հասցեում տեղադրված շենքի թե՝ ճարտարապետական հուշարձանները և թե՝ պատմական քաղաքային միջավայրը ենթակա են ամբողջական վերականգնման:

7.6.3 Միջամտության մակարդակ:

Հուշարձանների և տեսարժան վայրերի պահպանությունը հենվում է ժամանակակից փորձի և ուսմունքի վրա, որը, անշուշտ, խարսխվում է պահպանության միջազգային սկզբունքներին վերաբերող ամենաներ կայացուցչական փաստաթղթի՝ Վենետիկի խարտիայի վրա:

Շիրազի 17 հասցեում տեղադրված շենքի պատմաճարտարապետական հուշարձանն ու իր պատմական միջավայրը՝ որպես «Կումայրի» արգելոցի բաղկացուցիչ մաս, անհրաժեշտ է վերականգնել հետևելով խարտիայի բոլոր դրույթներին համապատասխան:

Սակայն հայտնի է, որ հուշարձանները, քաղաքային համակառույցները և բնապատկերը շրջափակող միջավայրի կառավարումը պահանջում է մոտեցումներ, որոնք պետք է հաշվի առնվեն բազում շահեր՝ ներառյալ սեփականատերերինը: Դրանք շատ դեպքերում հանգեցնում են հուշարձանների մշակութային և ֆիզիկական միջավայրը վնասող սոցիալ-տնտեսական ձևափոխումներին: Սոցիալ-տնտեսական պարտադրանքները հաճախ հանգեցնում են այնպիսի ձևափոխման, որն անմիջապես ունենում է ծանր հետևանքներ հուշարձանային ընդարձակ տարածքների համար: Հատուկ ուշադրության և աճող մտահոգության առարկա է հանդիսանում նաև բնական աղետների հետևանքով ամայացած ու տուժած վայրերի վերակառուցումը. հրատապությունը հաճախ պարտադրում է մի կողմ թողնել մշակութային ընդգրկումներն ու ավանդույթները՝ ի նպաստ նոր տեխնոլոգիաների: Այս ամենը կրկին պարտադրում է հրաժարվել որոշ սկզբունքներից:

7.6.4 Պատշաճ օգտագործման նախնական առաջարկներ, եթե կիրառելի է:

Համաշխարհային փորձը միանշանակորեն հաստատում է հուշարձանների և դրանց պատմական միջավայրի լավագույն պահպանությունը դրանց օգտագործումն է: Դրա արդյունքում լուծվում է փոխկապակցված երկու հիմնախնդիր՝ հուշարձաններն ու դրանց պատմական միջավայրը ներգրավվում են տնտեսական շրջանառության մեջ, և միաժամանակ բարելավվում դրանց պահպանության խնդիրը: Հուշարձանների վատթարացման վրա մարդկային գործոնը ունի մեծ ազդեցություն, որը անհրաժեշտ է փոխել դրականի. հուշարձանը պետք է շահագործել միայն մեկ ձևով՝ օգտագործման եղանակով: Եթե չի օգտագործվում, ուրեմն նա տեր չունի:

7.6.5 Սոցիալական կիրառումների և կայուն զարգացման հնարավորություններ:

Վերականգնելով շենքը և դարձնելով արվեստագետների կացարան՝ կստեղծվեն նոր՝ ծառայություն մատուցող աշխատատեղեր, սկիզբ կդրվի տարատեսակ համագործակցությունների՝ թանգարանների, պատկերասրահների, անհատ կոլեկցիոներների և այլոց հետ, կզարգանա զբոսաշրջությունը, առևտուրը /հնարավորություն կընձեռվի նաև վաճառել ստեղծագործությունները/, կբացվեն ստուդիաներ, որտեղ արվեստասեր հասարակությունը հնարավորություն կունենա դասընթացներ անցնել հյուրընկալված և տեղական արվեստագետների մոտ: Կստեղծվի կացարանի և նրա գործունեության մասին լուսաբանող բազմալեզու էլեկտրոնային կայք՝ տեղեկատվության դրամադրման նպատակով:

7.6.6 Ամրացման/ծածկապատման, վերանորոգման, կոնսերվացման, վերականգնման գերակայությունների ընդհանուր գնահատում:

Առաջարկները տրված են 7.5 և 7.6.3 կետերում:

7.6.7 Հանրամատչելիություն:

Բնակելի տան վերակագնումն ու արվեստագետների համար կացարան ստեղծելը Գյումրի քաղաքի համար մեծ նշանակություն ունի և պոտենցիալ համայնքային օգուտ է:

7.6.8 Այլ առավելություններ:

Կվերականգնվի պատմական տեսքը, կկազմակերպվեն տարբեր տեսակի մշակութային միջոցառումներ, կբացվեն արվեստանոցներ, որտեղ երիտասարդ սերունդը արվեստի տարբեր տեսակների դասընթացների և խմբակերի կհաճախի: Կկազմակերպվեն արվեստի պատմության դասընթացներ ցանկացողների համար, ինչպես նաև սրճարան:

7.7 Ֆինանսներ

Շիրազի 17 հասցեում տեղադրված շենքի պատմամշակութային արժեքը վերակենդանացնելու նպատակով անհրաժեշտ են ֆինանսական միջոցներ, որոնք ուղղված կլինեն հետևյալ միջոցառումներն իրականացնելու համար.

I Վերականգնման գիտանախախծային փաստաթղթերի մշակում (ներառյալ համալիր փորձաքննությունը)– 24 000 000 դրամ /45 283 եվրո/

II Իրականացման աշխատանքներ 1 200 000 000 դրամ /2 264 150 եվրո/

Ընդամենը՝ մոտ 1 224 000 000 դրամ (մոտ 2 310 000 եվրո)

7.7.1 Բյուջետային կարիքների ընդհանուր գնահատում և փուլայնություն:

Շիրազի 17 հասցեում տեղադրված շենքի խիստ վթարայնության կանխման նպատակով անհրաժեշտ են անհապաղ միջամտություններ, որոնց ընդհանուր արժեքը կազմում է 6 000 000 դրամ /11 320 եվրո/:

7.7.2 Ներդրումների ներգրավման (իրական) հնարավորությունների գնահատում:

Շիրազի 17 հասցեում տեղադրված շենքի, դրանց պատմական միջավայրի վերականգնման գործում հնարավոր ներդրումներ կարող են կատարել միջազգային դոնոր

կազմակերպությունները (Համաշխարհային բանկ, Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկը, Ասիկանա զարգացման բանկը են այլն), Հայաստանի Հանրապետությունն ի դեմս ՀՀ մշակույթի նախարարության, այլ միջազգային ու համահայկական հիմնադրամներ («Գյումրիի ընկերներ», «Հայաստան համահայկական հիմնադրամ» եւ այլն):, ինչպես նաեւ մասնավոր ներդրողներ:

7.7.3 Արդյոք փորձե՞լ եք միջոցներ հայթայթել տվյալ վայրի կամ հուշարձանի համար:
Ոչ

7.7.4 Արդյոք ստացե՞լ եք միջոցներ տվյալ վայրի կամ հուշարձանի համար:
Ոչ

7.8. Կառավարում

Շիրազի 17 բնակելի տան վերականգնման, բարեկարգման ու զարգացման ծրագիրը կարճաժամկետ է: 2016 թ. օգոստոսի 12-ին COMUS ծրագրի շրջանակներում մշակված Գյումրու Ելակետային պլանը քաղաքի գլխավոր ճարտարապետ և ՏՇԽ անդամ Հենրիկ Գասպարյանի կողմից ներկայացվել է Գյումրու ավագանու խորհրդի նիստին և հաստատվել միաձայն քվեարկությամբ:

Գործընթացին կիրագործեն Գյումրու համայնքապետարանը և ՀՀ մշակույթի նախարարությունը, մասնակցություն կունենան քաղաքացիական հասարակությունը հասարակական կազմակերպությունները, տեղական ինքնակառավարման մարմինների մասնակիցները, ակտիվ խմբերը: Այն կդառնա արվեստագետների և արվեստասեր հասարակության մշտական հավաքների, մտքերի և փորձի փոխանակման կենտրոն, որը կնպաստի մշակութային փոխազդեցությանը:

8. Փաստաթղթավորում

Նկար 3,4. Հուշարձանի ընդհանուր տեսքը Շիրազի փողոցի կողմից

Նկար 5. Հուշարձանի բացվածքները

Նկար 6. Մուտքը դեպի բակ

Նկար 7. Փայտե գերաններով միջհարկային ծածկ

Նկար 8. Հուշարձանի կամարակապ նկուղը

Նկար 9. Հուշարձանի կամարակապ նկուղը

Նկար 10. Քայքայված ծպեղնաածածկեր

Նկար 11. Հուշարձանի տեսքը բակի կողմից

9. Նպատակահարմարության վերաբերյալ ուսումնասիրություններ

Անհրաժեշտ է ստեղծել մասնագիտական խումբ կազմված հետևյալ մասնագետներից՝ ծրագրի համակարգող, գիտական ղեկավար, միջազգային և տեղական խորհրդատուներ, վերականգնող ճարտարապետ, կոնստրուկտոր, երկրաբան, երկրաֆիզիկ, ներքին և արտաքին էլեկտրասնուցման, ջրամատակարարման և կոյուղու, գազաֆիկացման մասնագետներ, շրջակա միջավայրի վրա ներգործության գնահատողներ, դենդրոլոգներ, անվտանգության մասնագետներ, շինարարության տնտեսագետներ, վերականգնող շինարարներ, ինտերիերի և էքստերիերի դիզայներներ:

ՆՏԳ-ն իրականացրել է՝ Գայանե Նազլուխանյան